տեսնես գիւղեր, որ իւրաքանչիւր գիւղի տներու ծուխերն իրար միանալով ամպի նման յերկինս կը ձգուին, պահ մի պիտի հաւատաս թէ ծովի վերան հեռուն տեսնուած շղթեաներ են, եթէ ծովեզերեայ բնակիչ ես և ծովի տեսարանի վարժուած։

Մենք տեսանք ճանապարհներու վերայ մարդիկ, որք ձիւնը ճեղքելով ճանապարհ բաց արած էին. նոքա կուրախանային որ բացուած ճանապարհով հանգիստ իրենց տունը պիտի վերադառնան, սակայն անգութ բուքը դարձեալ հարթ հաւասար արաւ, յայտնի չէ ճանապարհի հետքը մի մազի չափ անգամ։ Նա ստիպուած է դարձեալ ձիւնը ճեղքել և գնալ, սակայն դիւրութեան համար նախորդին հետքը պիտի գտնէ որպէս զի ոտներն ի խոր շատ չը խորասուզուին։

Այսպէս քանի անգամ շարունակուելով շարունակուելով թառ [1] մի կազմուեցաւ։

Թառը դարձեալ լցուած է, թառը գտնել և վերայէն ուղիղ գնալու համար հմուտ անձ պէտք է, եթէ թառի վերայէն գնայ, ոտներն մի թիզ խոր կը խորասուզուին, իսկ թառից դուրս երեք կամ չորս թիզ, ուրեմն թառը գտնել որչափ կարևոր է։ Այն մարդը որ թառը կորոյս, մի ժամուան ճանապարհորդութիւնը վեց ժամէն պիտի կատարէ, և ինչ նեղութեամբ։

Որչափ կը ցանկայինք հայկական հանդէսներ ձեռք բերել, գարունը մօտեցնել։ Սակայն Բագրեւանդայ համար դեռ ուշ էր։ Մենք Փետրուար 14ը մեր եռեւը նեռեցինք, «Տէրընտեսի» արարողութիւնը կատարեցինք՝ կրակ վառելով մեր տանիքներու վերայ եկեղեցիէն վառ բերուած ճրագով բոցի վերայից նեռուեցանք. նոր հարսներն բոցի շուրջն եօթ

---

1. Մարդիկ ձեան վերայ կոխելով կամրանայ երբ երկրորդ անգամ ձիւն գայ, մարդիկ դարձեալ կսկսեն եւ այսպէս քանի անգամ շարունակելով այդ կոխուած ձիւնը բարձր խաւ մի կը կազմէ, որոյ վերայ եւս դարձեալ ձիւն գայ, որոյ կասեն թառ, որ թէեւ միւս ձեան երեսի հետ հաւասարած է եւ հնշմարուիր գնալու ուղղութիւնը. սակայն Բագրեւանդ կան հմուտ անձեր, որ զմարդ այնպէս կառաջնորդեն, երբէք թառից դուրս չեն գար։